

Ալբերտ Ա. Մակարյան
Բանաս. գիյր. դոկտոր

Լիանա Ա. Սաֆարյան
Բանաս. գիյր. թեկնածու

ՏԵՄԻՐ ՀԱՅԸ

Հատվածներ Էլիաս Կանետիի ինքնակենսագրական
եռագրությունից*

Մուտք

20-րդ դարի համաշխարհային գրականության մեջ առանձնահատուկ է Գրականության Նոբելյան մրցանակակիր Էլիաս Կանետիի (1905-1994) գրադեցրած տեղը:

Ստեղծագործական երկարամյա կյանքի ընթացքում նա գրել է բազմաթիվ երկեր, որոնք աչքի են ընկնում իրենց գեղարվեստական բացառիկ արժանիքներով: Բազմաժանր է գրողի թողած գրական ժառանգությունը՝ վեպ («Կուրացում», 1935), դրամաներ («Հարսանիք», 1931-1932, «Սնափառության կատակերգություն», 1933-1934, «Ժամանակով սահմանափակվածները», 1952), իմաստասիրական և այլ բնույթի բազմաթիվ աշխատություններ («Չանգված և իշխանություն», 1938-1960, «Մարաքեշի ձայներ», 1968, «Խոսքերի խիղճը» էսսեների շարքը, 1969, «Փրկված լեզու», «Ջահը ականջում», «Աչքախաղ» 1977-1985): Կանետին տևականորեն վարել է նաև օրագրեր, որոնցում աֆորիզմների տեսքով արտացոլվել են նրա գրեթե բոլոր երկերում առկա առանցքային թեմաները՝ իշխանությունը և նրան հակադեցությունը, զանգվածային ու անհատական գիտակցության հարաբերակցությունը, կյանքի հաղթանակը մահվան հանդեպ, այն վերափոխումները, որոնց մարդը ենթարկվում է իր ամբողջ կյանքի ընթացքում, լեզուն, որի կախարդական ուժը երբեք չէր դադարում զարմացնել այդ ինքնատիպ մտածողին: Որպես **ավստրիական գրականության** ներկայացուցիչ՝ Կանետին բացառիկ ներդրում է ունեցել ողջ գերմանալեզու գրականության մեջ, հատկապես ինքնակենսագրական ժանրի զարգացման գործում: Եվ այդ ամենի


Գ. (Թ) րարի, թիվ 2 (34) ապրիլ-հունիս, 2011

Էլիաս Կանետիական համալիր

* 20-րդ դարի համաշխարհային գրականության ակադեմիայի ղեկավարի ստեղծագործություններում մենք հանդիպում ենք ցեղասպանության դաժան հարվածներից օտար ավերում հանգրվանած **տխուր հայի** կերպարը: Էլիաս Կանետիի ինքնակենսագրական եռագրության մեջ առկա նման դրվագը էլ ավելի է կարևորում որպես Բուլղարիայում ծնված գրողի մանկության հիշողություն: «Վեն»-ը առաջիկայում ևս իր էջերում տեղ է հատկացնելու դասականների երկերում պահպանված Գայոց ցեղասպանության վերհուշի քննությանը: Խմբ.: Ընդունվել է տպագրության 16.06.2011:

շնորհիվ նրա անունն այսօր իրավացիորեն դասվում է համաշխարհային գրականության այնպիսի հսկաների շարքում, ինչպիսիք են Կ. Կրաուզը, Ֆ. Կաֆկան, Ռ. Մուզիլն ու Հ. Բրոխը՝ գրողներ, որոնց միավորում էր իրականության մարգարեական կանխատեսումը:

1. Էլիաս Կանետիի կյանքի ուրվագիծը



Էլիաս Կանետին ծնվել է 1905 թվականի հուլիսի 25-ին Գանուբի ափին փոքր բուլղարական Ռուսե (Ռուսչուկ) քաղաքում՝ վաճառականի ընտանիքում: Նրա ծնողները՝ Մաթիլդե և Ժակ Կանետիները, իսպանական հրեաներ էին, որոնց նախնիները 15-րդ դարում Իսպանիայից վտարվել էին Թուրքիա: 1911-ին կանետիների ընտանիքը տեղափոխվում է Անգլիա, ուր վրա է հասնում դժբախտությունը. նույն տարվա աշնանը երիտասարդ տարիքում հանկարծամահ է լինում հայրը: 1913-ին մայրը երեք որդիների՝ Էլիասի, Նիսիմի և Գեորգի հետ տեղափոխվում է Վիեննա, 1916-ին՝ Յյուրիխ, իսկ 1921 թ. նրանց ընտանիքը մեկնում է Մայնի Ֆրանկֆուրտ, որտեղ Էլիասը սովորում է գիմնազիայում: Այն ավարտելուց հետո, սկսած 1924 թվականից, քիմիա է ուսանում Վիեննայի համալսարանում: 1929-ին պաշտպանում է թեկնածուական թեզ: Այդ տարիներին Վիեննայում նա կանոնավոր հաճախում է ժամանակի մեծագույն երգիծաբաններից ու քննադատներից մեկի՝ Կարլ Կրաուզի դասախոսություններին, որտեղ էլ ծանոթանում է իր ապագա կնոջ՝ Վեցա Թաուրներ-Կալդերոնի հետ: 1938-ին՝ մացիստների կողմից Ավստրիայի բռնազավթումից հետո, Կանետին նախ՝ տարագրվում է Փարիզ, այնուհետև՝ Լոնդոն: Սակայն, չնայած դրան, նա իրեն երբեք տարագիր գրող չի համարել:

Է. Կանետին իր գրական գործունեությունն սկսում է 23 տարեկան հասակում. 1928-ին նա կատարում է հրաշալի թարգմանություններ, և հայտնի հրատարակիչ Վիլանդ Հերցֆելդից ստացած աշխատանքի առաջարկը նրան հնարավորություն է ընձեռում մեկնելու Բեռլին, որտեղ էլ ծանոթանում է նշանավոր մտավորականներ Գեորգ Գրոսցի, Բերթոլդ Բրեխտի և Իսահակ Բաբելի հետ: 1931-ին ավարտում է «Կուրացում» («Blendung») վեպը, որը լույս է տեսնում «Կանտը կրակ է որսում» վերնագրով: Սակայն այդ վեպը նրան մեծ հեղինակություն է բերում միայն 60-ական թվականներին՝ վերահրատարակվելուց հետո: Գրան հաջորդում են «Հարսանիք» («Die Hochzeit», 1933) և «Սնամիառության կատակերգություն» («Komödie der Eitelkeit», 1934) դրամաները:

Ավստրիան մացիստական Գերմանիային բռնակցվելուց հետո, լոնդոնյան Հենփսթիդ թաղամասը, ուր հավաքվել էին գերմանախոս հրեա վտարանդիները, դառնում է Կանետիի «աքտրավայրը»: Այդ մշակութային միջավայրում է նա գրում իր գլուխգործոց երկը՝ «Չանգված և իշխանությունը» („Masse und Macht“), որը կարող է ընկալվել որպես դարաշրջանի քննադատություն:

1952-ին Կանետին գրում է «Ժամանակավորները» („Die Befristeten“) դրաման: Ուշագրավ է այն հանգամանքը, որ թեև նրա գործերը շուտով թարգմանվում

են տարբեր լեզուներով, այնուամենայնիվ գրողը համընդհանուր ճանաչում է ձեռք բերում միայն 1963 թվականին, երբ Գերմանիայում վերահրատարակվում է «Կուրացումը»: Այդ ժամանակից ի վեր Կանետին սկսում է հրատարակել բազմաթիվ նոթեր ու էսսեներ և, վերջապես, իր ինքնակենսագրական եռագրությունը՝ «Փրկված լեզու» („Die Gerettete Zunge“, 1977), «Ջահը ականջում» („Die Fackel im Ohr“, 1982) «Աչքախաղ» („Das Augenspiel“, 1985) խորագրերով: 1991-ին, Կանետիի վախճանից 3 տարի առաջ, լույս է տեսնում հեղինակի վերջին գիրքը, նոթերի չորրորդ հատորը՝ «Թռչելու տառապանքը» (“Die Fliegenpein“):

1970-ին Կանետին դառնում է Բեռլինի գեղարվեստի ակադեմիայի անդամ և Գերմանիայի լեզվի ու ստեղծագործության ակադեմիայի թղթակից անդամ: 1986-ին նրան շնորհվում է Վիեննայի պատվավոր քաղաքացու կոչում: Իր ինքնակենսագրական երկի առաջին հատորի («Փրկված լեզու») համար Կանետին 1981-ին արժանանում է Նոբելյան մրցանակի: Նրան շնորհվել են նաև գրական բազմաթիվ այլ հեղինակավոր մրցանակներ՝ Grand Prix International du Club Francais du Livre (1949), Վիեննայի գրական մրցանակ, Գերմանական քննադատների մրցանակ (1966), Ավստրիայի պետական մեծ մրցանակ (1968), Բավարիայի գեղարվեստի ակադեմիայի գրական մրցանակ (1969), Գերմանական արդյունաբերության դաշնային ընկերության մշակութային խմբակի գրական մրցանակ (1971), Գեորգ Բյուխների (1972), Ֆրանց Նաբլի (1975), Յոհան Պետեր Հեբելի (1980) և Ֆրանց Կաֆկայի (1981) անվան մրցանակներ:

Իր վերջին պարզևատրումից հետո Կանետին ապրում էր մեկուսացած կյանքով՝ սկզբունքորեն հրաժարվելով մեկնաբանել իր ստեղծագործությունները: Մինչև 70-ականները նրա մշտական բնակավայրն էր Լոնդոնը, ապա տեղափոխվում է Յյուրիխ՝ Լոնդոնի բնակարանը պահելով մինչև 1986 թվականը:

Էլիաս Կանետին վախճանվեց 1994 թվականի օգոստոսի 14-ին Յյուրիխում, ուր թաղվեց հանճարեղ իռլանդացու՝ Ջեյմս Ջոյսի կողքին: Նրա անձնական արխիվը՝ 15.000 գրքեր և ձեռագրեր, գրողի ցանկությամբ ժառանգել է Յյուրիխի կենտրոնական գրադարանը: Ի դեպ, նրա գրական բազմաբնույթ ժառանգությունը երկար ժամանակ անմատչելի էր ուսումնասիրողներին, քանի որ Կանետիի ցանկությամբ իր փաստաթղթերը փակ էին պահվելու 8 տարի, իսկ օրագրերն ու նամակագրությունը՝ 30 տարի: Գրական այդ ժառանգությանն են պատկանում 1942-1986 թթ. գրված նրա նոթերն ու օրագրերը, ինչպես նաև «Չանգված և իշխանություն» փիլիսոփայական աշխատության նախնական տարբերակներն ու գրառումները: Այնտեղ են նաև ինքնակենսագրական եռագրության ուրվագրերն ու գրառումները:

2. Ինքնակենսագրական եռագրությունը

Ինքնակենսագրական երկի բաժանումը երեք հատորի պայմանավորված է հեղինակի կյանքի բեկումնային ժամանակահատվածներով՝ 1921, 1931, 1937 թվականներով: Դրանք այն վճռորոշ պահերն էին, երբ նրա կյանքի իրադարձությունները տեղի էին ունենում Եվրոպայի հասարակական-քաղաքական գործընթացներին զուգահեռ: Եռագրության վերնագրերը փուլ առ փուլ ցույց են տալիս Կանետի անհատի զարգացման պատմությունը և վերաբերում են հեղինակի վերապրած իրադարձություններին ու դեպքերին: Խորագրերում արժարժվող «լե-

զու», «ականջ» և «աչք» զգայարանները հանդես են գալիս որպես յուրօրինակ խորհրդանիշեր իր՝ որպես անհատի զարգացման փուլերի ներկայացման համար: Ելնելով բովանդակությունից, Կանետիի՝ որպես գրողի զարգացման կարևորագույն փուլերը երեքն են. «խոսելը»՝ «Փրկված լեզվում», «լսելը»՝ «Ձախր ականջում» գործում, իսկ այնուհետև «տեսնելը»՝ «Աչքախաղում»:

Հենց առաջին գլխից հասկանալի են դառնում «Փրկված լեզու» վերնագրի ընտրությունն ու խորհուրդը: Առաջին հատորի սկիզբը գրված է 3 տարեկան երեխայի տեսանկյունից, որում պատկերված է նրա վախն իր լեզուն կտրել սպառնացող օտար մարդու հանդեպ: Երեխաների դայակի սիրեկանը փոքրիկ Էլիասին սպառնում է, որ նա ծնողներին չհայտնի իրենց թաքուն կապի մասին: Այս դեպքն ունի խորհրդանշական իմաստ. փրկել կենսաբանական լեզուն, նշանակում է փրկել նաև խոսելու ունակությունը, քանի որ լեզուն բնորոշվում է իբրև Կանետի անհատի ձևավորման և զարգացման հիմնական միջոց: Հեղինակը լեզվի կորուստը համարում է կյանքի կորուստ: Փրկվում է նաև ծնողների «կախարդական լեզուն»: Երբ ծնողներն անձնական խոսակցությունների ժամանակ անցնում էին գերմաներենի, որդին, խանդով համակված, բայց միաժամանակ հիացած՝ հետևում էր իր համար օտար լեզվի հնչյուններին. «Նրանք չափազանց աշխույժ և ուրախ էին դառնում, և ես այդ կերպարանափոխությունը, որը, իհարկե, նկատում էի, կապում էի գերմաներենի հնչյունների հետ»¹:

Հետաքրքիր է նաև այն իրողությունը, որ Կանետիի համար հայրենիքի գաղափարը զուգորդվում է ոչ թե որևէ երկրի, այլ հենց լեզվի հետ: Կանետիի՝ որպես անհատի, զարգացումը հիմնականում պայմանավորված էր բազմաթիվ լեզուներ սովորելու փաստով, քանի որ նրա ընտանիքը հաճախ էր տեղից տեղ փոխադրվում, ուստի փոփոխվում էին նաև հասարակական միջավայրերը:

Ռուսչուկում ապրող հրեական համայնքի կյանքն առանձնանում էր լեզուների բազմազանությամբ, քանի որ իրենց սեփական լեզուն՝ դարերով պահպանված միջնադարյան եբրայերեն-իսպաներենը, տարագիրների ու արտաքսվածների լեզուն էր: Սա հանգեցնում էր եսակենտրոն վերաբերմունքի, ընդ որում, «խոսելը»՝ որպես ինքնաարտահայտման ձև, դառնում էր առաջնակարգ ու կարևոր:

Երկրորդ գրքի վերնագիրը՝ «Ձախր ականջում», արտացոլում է հեղինակի՝ Վիեննայում ապրած տարիները, որոնք անցել են հիմնականում ավստրիացի մեծ երգիծաբան ու քննադատ Կարլ Կրաուզի (1874-1936) ազդեցության տակ: Կանետին կանոնավոր հաճախել էր այդ նշանավոր մտավորականի դասախոսություններին: Ի դեպ, իր եռագրության երկրորդ հատորի խորագիրն ընտրելիս («Ձախր ականջում») նա նկատի է ունեցել հենց Կրաուզի պարբերականը՝ դրանով արտահայտելով վերջինիս նկատմամբ հիացմունքը: Վերնագրում ակնհայտ է Կանետիի երկակի վերաբերմունքը Կրաուզի հանդեպ: «Կարլ Կրաուզն ամենամեծ և խստաբարո անձնավորությունն է,- վերոհիշյալ հատորում գրում է Կանետին,- որն ապրում է Վիեննայում: Նա անողորմ է բոլորի հանդեպ: Իր ելույթներում հարձակվում է այն ամենի վրա, ինչը վատ է ու անբարո: Նա հրատարակում է մի պարբերական, որի էջերը միայն ինքն է լրացնում: Չի ընդունում ոչ մի հողված, նամակներին չի պատասխանում: Յուրաքանչյուր բառ, յուրաքանչյուր վանկ պատկանում է նրա գրչին: Նրա պարբերականը նման է դատարանի. նա ինքն է մեղադրում, ինքն է դատում: Դատապաշտպաններ չկան.

1 Canetti, Elias: Die gerettete Zunge. Geschichte einer Jugend. Frankfurt am Main: Fischer, 1997. S. 34.

դա ավելորդ է. նա այնքան արդար է, որ ոչ ոք չի մեղադրվի, եթե դրան արժանի չէ: Ամեն ինչից երևում է, որ Կրաուզի պարբերականը Կանետիի համար դարձել էր գրական ու բարոյական գնահատականների բացարձակ և բարձրագույն ատյան:

Կանետի գրողի համար «լսել» նշանակում է հասկանալ մարդկանց, ըմբռնել և ընդունել նրանց անհատականությունը. «Այն մարդկանց միջև մերձեցման ճանապարհները բաց պահելու միջոց է»²: Բայց ունկնդիր դառնալով՝ չավարտվեց գրողի ուղին: «Աչքախաղում» ի հայտ է գալիս երրորդ՝ տեսնելու, գննելու փուլը: Ինքնակենսագրական երկի երրորդ հատորը ներկայացնում է վտարանդիությանը նախորդած տարիներն ու նախապատերազմյան ժամանակաշրջանը: Գրողն իրեն հռչակում է որպես ժամանակի ակնատես: Նա մասնակից չի դառնում իրադարձություններին, մնում է դրսում, հետևում և գնահատական տալիս դրանց: Ունկնդրելը՝ որպես մարդկանց ուսումնասիրելու միջոց, թեև դեռևս մնում է առօրեական, այնուամենայնիվ երրորդ հատորում գերակշռում են մարդկանց գնումը և ժամանակի իրադարձություններին հետևելը:

Եռագրության բոլոր երեք վերնագրերը փաստորեն վերաբերում են Կանետի գրողի կայացման, նրա ստեղծագործության զարգացման հանգրվաններին: «Փրկված լեզուն» նվիրված է հեղինակի կյանքում լեզվի, հատկապես գերմաներենի նշանակությանն ու դերին, «Չահր ականջումը»՝ Կարլ Կրաուզին, որպես բարոյականության բարձրագույն ատյանի, իսկ «Աչքախաղը» հանդես է գալիս որպես գրողի վտանգված, բայց ամուր պահպանված ինքնության խորհրդանիշ: Այսպիսով, մարդկային բոլոր երեք զգացողությունները՝ խոսելը, լսելը և տեսնելը, գրողի համար դառնում են աշխարհը բացահայտելու, մարդկանց ու նրանց կերպարանափոխությունը ճանաչելու յուրօրինակ միջոց:

3. Հայ մարդու ողբերգությունը հրեա մանչուկի աչքերով

Եռագրության առաջին հատորում չափազանց ուշագրավ է, թե ինչպես է աշխարհն ու իրերն ընկալում վեցամյա հրեա մանչուկը: Նրա ծննդավայր քաղաքը՝ Ռուսչուկը, բազմազգ էր, հետևաբար՝ գունագեղ և մշակութային տարբեր արժեքներ կրող: Բուլղարներից բացի՝ այնտեղ բնակվում էին բազմաթիվ հույներ, հրեաներ, ալբանացիներ, հայեր, ռուսներ, ռումինացիներ ու գնչուներ: Եվ, ինչպես հետագայում խոստովանել է հուշագիր Կանետին, այդ ժողովուրդներն այս կամ այն չափով ազդում էին իր աշխարհայացքի ձևավորման վրա: Լինելով հրեա ժողովրդի գավակ՝ Կանետին աստիճանաբար հասկանում է փոքր ժողովուրդների ցավն ու ողբերգությունը և դառնում շատ զգայուն՝ բռնության նկատմամբ: Այս տեսակետից, եռապատումի առաջին հատորում հատկապես տպավորիչ է երեխայի հիշողության մեջ անջնջելի հետք թողած հայ մարդու ողբերգությունը: Հեղինակի ստեղծագործության մեջ իբրև ճակատագրի դաժան հարվածներին և բռնությանը դիմադրող անհատի ինքնագտնումի ուժը մարմնավորող հավաքական կերպար և խորհրդանիշ է ներկայանում կանետիների ռուսուկյան տանն աշխատող **հայը**: Վերջինս իր բազմանդամ ընտանիքից միակն էր, ով փրկվել էր կոտորածներից և օթևան գտել Բուլղարիայում՝ Կանետիների տանը: Էլիասն

2 Canetti, Elias: Fackel im Ohr. Lebensgeschichte 1921-1931. Frankfurt am Main: Fischer, 1997, S. 286.

անանուն հային «**ընկեր**» է անվանում ու այդպես է արտահայտում իր ջերմ վերաբերմունքը նրա հանդեպ. «Հենց տեսնում էր ինձ, թեթևակի ժպտում ու բարձրացնում էր կացինը: Եվ զարհուրելի էր այն տեսարանը, թե ինչ ցատումով էր նա հարվածում փայտին»³: Ի դեպ, **կացինն** այստեղ դառնում է փոքր ու ճնշված ժողովրդի բարկության խորհրդանիշ: **Հայի կացինը** երեխան ընկալում է նաև որպես վրեժխնդրության գործիք, քանի որ եռագրության հաջորդ էջերում պատմում է, թե ինչպես մի անգամ իր զարմուռուց՝ Լաուրիկայից, վիրավորված, ինքն էլ վերցնում է նույն կացինն ու փորձում է հարվածել նրան, ինչպես հայը կհարվածեր փայտին: Եղեռնապուրծ հայ մարդն աշխատելիս երգում էր իր հեռավոր հայրենիքի տխուր մեղեդիները՝ դրանց մեջ արտահայտելով վիշտն ու ցատմը: Եռագրության գլխավոր հերոսին տարօրինակ էր թվում այն իրողությունը, որ հայ մարդը, հակառակ ճակատագրի անողորմ հարվածներին, շարունակում էր պահպանել սեփական ինքնությունը:

Հայ և հրեա ժողովուրդների ճակատագրի թեման, ի դեպ, հաճախ է զբաղեցրել Կանետի գրողին ու մտավորականին: Իր մյուս երկում՝ «Չանգված և իշխանություն» աշխատության մեջ, նա ուշագրավ գուգահեռներ է անցկացնում հայերի ու հրեաների հետ 20-րդ դարում կատարված ողբերգական իրադարձությունների միջև: «**Հրեաներն արժանի են հիացմունքի,** գրում է Կանետին, **- որովհետև դեռ գոյություն ունեն: Նրանք, սակայն, միակը չեն, որոնց կարելի է տեսնել ամենուր. այդպիսին է նաև աշխարհասփյուռ հայությունը**»⁴:

Հայ և հրեա ժողովուրդների ճակատագրերի որոշակի նմանությունների մասին է խոսել նաև մեր երևելի գրագիտուհին, Հակոբ Օշականի դիպուկ բնորոշմամբ՝ «արևմտահայ գրականության ամենեն ամբողջ հաջողությունը»՝ Չապել Եսայանն իր «Սիլիհտարի պարտեզները» ինքնակենսագրական վիպակում: Ինչպես փոքրիկ Էլիասը, այնպես էլ աղջնակ Չապելը դեռ վաղ հասակից է հասկացել հալածված ժողովուրդներին բաժին ընկած ցավը: Նա պատկերել է մի շատ տպավորիչ տեսարան. լուսամուտից բակ նայող հայ աղջնակը մի օր տեսնում է աշխատանքից վերադարձող հոգնատանջ հրեա արհեստավորին, որին հանկարծ սկսում են ծաղր ու ծանակի ենթարկել փողոցային ինչ-որ տղաներ. վերջիններս խլում են նրա գործիքները, քաշքշում, իսկ հուսահատ մարդը, նստելով ձյան մեջ, լուռ արտասվում է: Վիպասանուհին ինքնաբերաբար հիշում է «Անի քաղաք մտած կույս» երգը, իսկ տատը «բացատրում է», որ հրեաները «գեշ ժողովուրդ» են, քանի որ խաչել են Քրիստոսին... «Գեշ ժողովուրդ չկա, վրա է բերում աղջկա հայրը, կան գեշ մարդիկ և լավ մարդիկ»⁵: Այնպես որ, հայ գրողների հուշերում նույնպես բազմաթիվ են հրեաների մասին պատմող էջերը, և հիշատակվածը դրանցից սոսկ մեկն է:

Փոքրիկ Էլիասի հիշողության մեջ արտասովոր վառ են մնացել նաև մյուս տառապյալների՝ գնչուների թափառումները: Իրենց առջև ամենուր փակ դռներ գտնող այդ տարագնացներն ուշադրության էին արժանանում սոսկ հրեաների կողմից, ովքեր յուրաքանչյուր ուրբաթ օր լայնորեն բացում էին իրենց տների դարպասներն ու հյուրասիրում նրանց: Ընդ որում, ոչ թե ուտելիքների մնացորդներով, այլ լավագույն պատառներով ու ընծաներով... Թափառախմբի հանդիսա-

3 Canetti, Elias: Die gerettete Zunge. Geschichte einer Jugend. Frankfurt am Main: Fischer, 1997, S. 20.

4 Canetti, Elias: Masse und Macht. Frankfurt am Main: Fischer. 1980, S. 208.

5 Եսայան Չապել, Երկեր, Եր., Հայպետհրատ, 1959, էջ 427:

վոր երթից ու խայտաբղետ հանդերձներից շլացած՝ երեխան պարուրվում էր հիացմունքի և վախի իրարամերժ զգացումներով: Գնչուներով են հիացել նաև հայ մանուկները: Նորից լսենք Չապել Եսայանին. «Գնչուները կրեբեին նաև արջ, կապիկ և խաղցնել կուտային թմբուկի ռիթմով: Այդպիսի առիթներու ոչ միայն գինետան մարդիկը, այլև դրացիներն ու անցորդները կխռնվեին փողոցը: Բոլոր պատուհաններեն դեռատի և տարեց կիներ մինչև կես մեջքերնին կախված, կղիտեին: Ես չեմ գիտեր ուրկե դուրս կուգային երեխաներու երամներ, ոմանք գլխաբաց և ոտաբոբիկ, ոմանք լավ հագված, որ կխուժեին բոլոր փողոցներեն և գռիհներեն և կխռնվեին գինետան առաջ»⁶:

Մանուկ Էլիասի վրա ցնցող տպավորություն են թողել նաև բազմաթիվ այլ հիշողություններ. մերթ՝ իր տան ճաղավանդակից ինչ-որ բուլղարացու նայելու պատճառով թուրք ամուսնու կողմից սպանված անմեղ կնոջ պատմությունը, մերթ՝ ծանր երկունքի ցավերով բռնված մոր աղեկտուր ճիչերը, մերթ էլ՝ կրտսեր եղբոր թլպատման ծիսակատարությունը... Եվ յուրաքանչյուր դեպքում վավերականի ու գեղարվեստականի յուրօրինակ ներհյուսումներով գրողը ստեղծել է ոչ միայն սեփական, այլև մի ամբողջ սերնդի կյանքի պատմությունը...

Ստորև ներկայացնում ենք հատվածներ Էլիաս Կանետիի «Փրկված լեզու. մի երիտասարդության պատմություն» ինքնակենսագրական եռագրության առաջին մասից⁷: Գերմաներեն բնագրից կատարված թարգմանությունը հայերենով հրատարակվում է առաջին անգամ:

Գ (Թ՝ փարի, թիվ 2 (34) ապրիլ-հունիս, 2011

ԷԼԻԱՍ ԿԱՆԵՏԻ

ՀԱՅԻ ԿԱՑԻՆԸ: ԳՆՉՈՒՆԵՐԸ

Ես երբեք չեմ փայլել տեղագրության շնորհքով, ինչին քաջահմուտ էր Ստենդալն իր «Հենրի Բրուվարդ» գրքում. ցավոք, միշտ էլ վատ գծագրող եմ եղել: Ուրեմն պիտի համառոտ նկարագրեմ, թե Ռուսչուկում բնակելի շենքերն ինչպես էին բոլորել մեր բակի այգին:

Երբ փողոցին նայող մեծ դարպասի միջով մտնում էիր բակ, հենց աջակողմում կանգնած էր Կանետի պապիս տունը: Այն ամենաերևելին էր, նաև՝ ամենաբարձրը: Բայց չեմ կարող պնդել՝ արդյոք ուներ վերնահարկ՝ ի տարբերություն մյուս մի-հարկանի տների: Ամեն դեպքում այն ինձ ավելի բարձր էր թվում, քանի որ կողքանց բազմաթիվ աստիճաններ էին բարձրանում: Պապիս տունը մյուսներից տարբերվում էր նաև իր բաց գույնի ծեփով, ինչը նրան անսովոր պայծառություն էր հաղորդում:

Դրա դիմաց՝ բակի դարպասի ձախակողմում, գտնվում էր ավագ հորաբրոջս՝ Սոֆիի տունը, որտեղ նա ապրում էր ամուսնու՝ քեռի Նաթանի հետ: Վերջինիս ավելի շատ ճանաչում էին Էլյաքիմ հավելյալ անունով: Այդ անունն ինձ այնքան էլ դուր չէր գալիս. թվում էր մի տեսակ օտարոտի, հավանաբար այն պատճառով,

վե՛ր համահայկական հանդես

⁶ Նույն տեղում, էջ 418:

⁷ Canetti, Elias: Die gerettete Zunge. Geschichte einer Jugend. Frankfurt am Main: Fischer, 1997, S. 18-28.

որ իսպաներեն այնպես չէր հնչում, ինչպես մյուս անունները: Հորաքույրս ուներ երեք երեխաներ՝ Ռեզինեն, Ժակը և Լաուրիկան: Ամենակրտսերը, ի դեպ, չորս տարով մեծ էր ինձանից, տարիքային մի տարբերություն, ինչը հետագայում ճակատագրական պիտի լիներ ինձ համար:

Այս տան կողքին՝ նույն շարքում՝ բակի ձախ կողմում, արդեն մեր տունն էր, որը շատ նման էր հորաքրոջս տանը. երկուսի մոտով էլ վեր էին ձգվում աստիճաններ, որոնք վերջանում էին դրանց գլխավերևի հրապարակով:

Երեք տների միջև շուրջանակի փռված այգին բավականին մեծ էր. մեր դիմաց, բայց ոչ մեջտեղում, այլ մի կողմ քաշված, սակավաջուր ու աստիճանական անհետացման դատապարտված ջրհորն էր: Այդ իսկ պատճառով ջրի հիմնական մասը, ջորիներին բարձած, հսկա տակառներով բերվում էր Դանուբից: Գետի ջուրը, սակայն, օգտագործման համար պիտանի չէր, և բնակիչներն այն եռացնելուց հետո մեծ ամաններով դնում էին տների առջևի հրապարակում՝ սառչելու:

Ջրհորի հետևում էր գտնվում բակից ցանկապատով առանձնացված ու բավական լավ խնամված պտղատու այգին: Այն գուցեև այնքան էլ հին չէր, բայց իր գեղեցկությամբ զիջում էր մորս ազգականների այգիներին:

Մեր տունն ու այգին իրարու կապվում էին նեղ արահետով: Այն ձգվում էր հեռու՝ դեպի տան հետնամասը, որը թեև միահարկ էր, բայց հիշողությանս մեջ մնացել է որպես մի շատ ընդարձակ տարածք: Այնպես որ կարելի էր ամբողջ օրը պտտվել տան շուրջը, նրա երկայնքով ու լայնքով, այնուհետև դառնալ հետևի փոքր բակը, որտեղից բացվում էր խոհանոցի մուտքը: Այնտեղ էլ դարսված էր վառելափայտը: Բակում կռկռոցով դեսուդեն էին վազվզում հավերն ու սագերը, բացօթյա խոհանոցում միշտ եռուզեռ էր. խոհարարուհին ստեպ-ստեպ ինչ-որ բան էր դուրս տանում և որոշ բաներ էլ բերում, իսկ կես դյուժին աղջնակներ էլ պտտվում էին ու աշխատում:

Տակավին երեխա՝ ես խոհանոցի բակում հաճախ էի տեսնում փայտ կոտրող մեր ծառային, ում այսօր էլ շատ լավ եմ հիշում. նա իմ ընկերն էր՝ տխուր հայր: Փայտ կոտրելիս նա այնպիսի երգեր էր երգում, որոնք թեև չէի հասկանում, բայց հոգիս տակնուվրա էին անում: Երբ մորս մի օր հարցրի, թե ինչու է այդ մարդն այդքան թախծոտ, պատասխանեց, որ Ստամբուլում վատ մարդիկ ցանկացել են բոլոր հայերին սպանել, և նա այնտեղ կորցրել է իր ամբողջ ընտանիքը: Թաքստոցից էլ ականատես է եղել՝ ինչպես են հոշոտել քրոջը: Ապա փախել է Բուլղարիա, և հայրս խղճահարությունից նրան մեր տանը ծառայության է վերցրել: Երբ հայր փայտ էր կոտրում, վստահ եմ, շարունակ մտածում էր իր քույրիկի մասին և այդ պատճառով էր երգում այդ տխուր երգերը:



Փոքրիկ էլիսաբ

Հայի նկատմամբ ես խորը սեր էի տածում: Երբ նա փայտ էր կոտրում, գնում-կանգնում էի երկար հյուրասենյակի վերջնամասում՝ պատուհանի մոտ տեղադրված բազմոցին: Այնտեղից հաճախ նայում էի խոհանոցի բակին, ուր աշխատում էր տխուր հայր: Եվ երբ նա սկսում էր երգել,

մտածում էի նրա դժբախտ քրոջ մասին (ես միշտ երագում էի քույրիկ ունենալ): Հայր երկարամորուս էր, սև-սաք մազերով: Նա ինձ բարձրահասակ էր թվում, հավանաբար այն պատճառով, որ երբ նայում էի նրան, գրեթե միշտ տեսնում էի դեպի վեր բարձրացրած ջլուտ ձեռքը: Ես նրան ավելի շատ էի սիրում, քան գործավար Չելեբոնին, ում հազվադեպ էի տեսնում: Ես ու հայր սովորաբար մի քանի խոսք էինք փոխանակում, բայց միայն մի քանիսը, և նույնիսկ չգիտեմ էլ՝ ինչ լեզվով: Սակայն նա սպասում էր ինձ, մինչ կսկսեի փայտ կոտրել: Հենց տեսնում էր ինձ, թեթևակի ժպտում ու բարձրացնում էր կացինը: Եվ զարհուրելի էր այն տեսարանը, թե ինչ ցատումով էր նա հարվածում փայտին: Այնուհետև մռայլվում ու երգում էր իր տխուր մեղեդիները: Երբ կացինը վայր էր դնում, նորից անչար ժպտում էր: Ես սպասում էի հայի ժպտին, ինչպես որ ինքն էր սպասում իմ ժպտին: Առաջին փախստականը իմ կյանքում:

...Յուրաքանչյուր ուրբաթ մեր բակ էր գալիս գնչուների թափառախումբը: Հրեական տներում այդ օրերին Սաբաթի առիթով սկսվում էր աշխույժ իրարանցում: Տունը վերից վար մաքրվում էր, բուլղար աղջիկներն այս ու այն կողմ էին վազվզում, խոհանոցում տիրում էր անսովոր եռուզեռ, և ոչ ոք ինձ հետ զբաղվելու համար ժամանակ չէր գտնում: Այդ պահերին ես ինձ զգում էի միանգամայն անտեսված ու դեմքս հսկայական հյուրասենյակի այգու կողմ բացվող պատուհանին սեղմած՝ անհամբեր սպասում էի գնչուներին: Եվ հետաքրքրականն այն էր, որ միաժամանակ էլ սարսափում էի նրանցից: Հիմա եմ հասկանում, որ դրա պատճառն այն շաղակրատ աղջիկներն էին, ովքեր, երեկոյան մթության մեջ, բազմոցին նստած, արտասովոր բաներ էին պատմում գնչուների մասին: Մտածում էի՝ նրանք երեխաներ են առևանգում, և համոզված էի, որ ինձ վրա ևս աչք էին տնկել: Բայց, չնայած այդ վախին, չէի կարողանում հաղթահարել նրանց տեսնելու գայթակղությունս. դա ինձ երբևէ պարզված զարմանահրաշ ու անմոռանալի տեսարաններից էր:

Քանի որ գնչուներին անհրաժեշտ էր բավական մեծ տարածք, նրանց առջև նախ լայնորեն բացվում էր բակի դարպասը: Նրանք գալիս էին հանց մի ամբողջ ցեղախումբ՝ մեջտեղում ունենալով գլուխը վեր պարզած կույր առաջնորդին: Նա խայտաճամուկ հանդերձներով գեղեցկատես ու ալեհեր ծերունի էր, ով քայլում էր հանդիսավոր և դանդաղ՝ մերթնդներթ աջ ու աջակ հենվելով իրեն ուղեկցող չափահաս երկու թոռների վրա:

Նրան կիպ շրջապատած գնչուներն ամենատարբեր տարիքի էին. քիչ էին տղամարդիկ. գրեթե բոլորը կանայք էին, ու անթիվ էին մանչուկները, որոնց մի մասը մայրերի գրկում էր, մյուսներն այս ու այն կողմ էին թռչկոտում, բայց երբեք չէին հեռանում միշտ մեջտեղով ընթացող հպարտ ծերունուց: Թափառախմբի մարդիկ կարծես թե ձուլված էին միմյանց. ես դեռևս չէի տեսել մի տեղում այդչափ կուտակված ու շարժվելիս իրար այդքան մոտ եղող մարդկանց: Մեր գունեղ քաղաքում դա թերևս ամենագունեղ տեսարանն էր: Գնչու երեխաների՝ հիմնականում կարկատաններով պատված ցնցոտիները փայլվում էին հնարավոր բոլոր գույներով, բայց ամենուր աչքի էր զարնում կարմիրը: Շատերի ուսերին ճոճվում էին տարբեր չափսերի մախաղներ, և ես դրանց չէի կարողանում նայել՝ առանց մտածելու, որ այնտեղ գողացված երեխաներ կան:

Թափառախումբն ինձ այն ժամանակ թվում էր անհաշվելի ու անվերջանալի, բայց այժմ, երբ փորձում եմ պատկերացնել նրա քանակը, նոր եմ հասկանում, որ

այն հազիվ բաղկացած լիներ երեսուն-քառասուն հոգուց. հոծ բազմության պատ-
րանքը պարզապես ստեղծում էր դանդաղընթաց երթը, որն առաջանում էր ծերուկ
գլխավորի պատճառով: Գնչուները մեծ բակում կանգ չէին առնում. անցնում էին
խոհանոցի առջևի ավելի փոքր բակն ու նստոտում վառելափայտի կողքին:

Ես սովորաբար սպասում էի այն պահին, երբ նրանք հայտնվում էին բակի
դարպասի առջևում, ու հենց տեսնում էի կույր ծերուկուն, վազում էի նրա հետևից
ու բացականչում՝ ցիգանները, ցիգանները... Հետո նույն թնդացնող գոչումնե-
րով անցնում էի երկար հյուրասենյակի միջով և այն խոհանոցին կապող էլ ավելի
երկար միջանցքով: Այդտեղ սովորաբար կանգնած էր լինում մայրս, ով ցուցում-
ներ էր տալիս Սաբաթի ուտեստների բաղադրության մասին (մի քանի հատուկ
խորտիկներ էլ ինքն էր պատրաստում): Այնպես էի հուզվում, որ ճանապարհիս
նույնիսկ չէի նկատում մեր տանն աշխատող փութեռանդ աղջնակներին, այնքան
էի շարունակում բացականչել, մինչև հայտնվում էի մորս կողքին, ով ինձ հանգս-
տացնելու համար միշտ ինչ-որ բան էր գտնում ասելու: Նրա մոտ մնալու փոխա-
րեն, սակայն, նորից հետ էի վազում, կտրում-անցնում ամբողջ ճանապարհը, պա-
տուհանից մի հայացք նետում արդեն փոքր-ինչ առաջացած գնչուներին: Հետո
այդ մասին անմիջապես տեղեկացնում էի խոհանոցում աշխատողներին: Ես
անհագաբար ուզում էի տեսնել գնչուներին, ամբողջովին կլանված էի նրանց տես-
քով, բայց հենց նկատում էի, անմիջապես էլ համակվում էի վախի սարսուռով, որ
նրանք ինձ վրա աչք են դրել: Հետո, այդ մտքից զարհուրած, բղավելով փախչում
էի: Իսկ այդպես շարունակվեց նաև հետագայում, և կարծում եմ՝ այդ վախն իմ
մեջ ծնվել էր երկու տների արանքում ընկած տարածության այդքան երկար
ձգված թվալու սուր զգացողությունից:

Երբ ծերուկը նստում էր, նրան շրջապատողները տեղավորվում էին խոհանո-
ցի առջում ու բացում իրենց պարկերը: Կանայք վերցնում էին բոլոր նվերները՝
առանց միմյանց հետ վիճելու: Ամենից առաջ ստանում էին հսկա կոճղեր, ինչին
կարծես թե ամենից շատ էին սպասում, նաև՝ բազմաթիվ ուտեստներ այն ամենից,
ինչն արդեն պատրաստ էր: Ի դեպ, նրանց երբեք չէին հյուրասիրում կերակրի
մնացորդներով: Ես թեթևացած շունչ էի քաշում, երբ տեսնում էի, որ նրանց պար-
կերում երեխաներ չկային, և մորս պաշտպանության ներքո անցնում էի նրանց
միջով, ուշադիր նայում էի՝ զգուշանալով, սակայն, ինձ շոյել ցանկացող կանան-
ցից: Ծեր կույրը դանդաղորեն ու հանդիսավոր ուտում էր պնակից, հանգստանում
և փոքր-ինչ հապաղում: Մյուսները ոչ մի ուտելիքի ձեռք չէին տալիս. ամեն ինչ
ակնթարթորեն անհետանում էր հսկա պարկերում: Միայն երեխաներն իրավունք
ունեին ուտել նվեր ստացած քաղցրավենիքներից: Ինձ զարմացնում էր, թե գնչու-
ներն ինչքա՞ն սիրալիր էին վարվում իրենց երեխաների հետ, այլ ոչ թե շարամտո-
րեն, երեխաներ առևանգողների պես: Բայց նրանց նկատմամբ ունեցածս վախն
ամենևին չէր փոխվում: Ինչ-որ ժամանակ անց, որն ինձ շատ երկար էր թվում,
նրանք ճանապարհ էին ընկնում: Թափառախումբը շարժվում էր ավելի արագ,
քան ժամանել էր: Ես նայում էի նրանց նույն պատուհանից, ակնդետ հետևում
դարպասով անհետանալուն: Հետո մի վերջին անգամ վազում էի խոհանոց՝ հայտ-
նելու. «Գնչուները հեռացան»: Մեր ծառան բռնում էր ձեռքս, տանում դարպասի
մոտ և փակելով այն՝ ասում. «Այժմ նրանք էլ չեն վերադառնա»: Դարպասը ցե-
րեկները սովորաբար բաց էին թողնում, սակայն հենց այդ ուրբաթ օրերին՝ գնչու-
ների գնալուց հետո, ամուր փակում էին, և մյուս թափառախմբերը, հասկանալով

իրենց ցեղակիցների արդեն այստեղ այցելելը, թեքում էին իրենց ճամփան:

ԵՂԲՈՐՄ ԾՆՈՒՆԴԸ

Վաղ մանկության շրջանում, երբ ինձ դեռ նստեցնում էին հատուկ՝ բարձր աթոռակին, գետինը շատ հեռու էր թվում, և վախենում էի, որ կընկնեմ ցած: Մի անգամ մեզ այցի եկավ ավագ հորեղբայր Բուկոն: Նա բարձրացրեց ինձ ու դրեց գետնին: Այնուհետև նրա դեմքը զվարթացավ, ձեռքի ավել դրեց գլխիս և ասաց. “Yo ti bendigo, Eliachico, Amen!”- «Օրհնում եմ քեզ, փոքրիկ Էլիաս, Ամեն»: Եվ ասաց այնքան համոզիչ ու հանդիսավոր ձայնով, որ ուրախացած մտածեցի արդեն մեծացած լինելուս մասին: Բայց նա կատակասեր էր և հաճախ էլ ծիծաղում էր: Ջգում էի՝ հիմա էլ է ծաղրում, և այդ օրհնանքը, ինչին այս անգամ փորձեցի հավատալ, դարձյալ ավարտվեց ձախողմամբ:

Հորեղբայրս համառ էր. ջանք չէր խնայում հասնելու նպատակին: Ինձ բազմաթիվ երգեր էր սովորեցնում և չէր հանգատանում այնքան ժամանակ, մինչև որ հաջողությամբ չէի երգում դրանք: Եվ երբ նորից էր այցի գալիս, դարձյալ ստուգում էր գիտելիքներս ու մեկ էլ համբերատար սովորեցնում մեծերին դրանք ի ցույց դնելու հմտությունները: Անկեղծ ասած՝ միշտ անհամբեր էի սպասում նրա հերթական օրհնությանը, թեև ինքը տպավորությունն անմիջապես փչացնում էր: Եվ եթե նա այդպես չաներ, ապա ինձ համար կդառնար ամենասիրելի հորեղբայրը: Նա ապրում էր Վառնայում, ուր պապիս գործերի կառավարիչն էր, և Ռուսչուկ էր գալիս միայն տոն օրերին ու հատուկ առիթներով: Նրա մասին բոլորը խոսում էին հարգանքով, քանի որ նա «Բուկոն» էր. դա յուրաքանչյուր ընտանիքում ծնված անդրանիկ զավակի պատվանունն էր: Ես շատ շուտ իմացա, թե ինչ է նշանակում առաջնեկությունը, և եթե մնայի Ռուսչուկում, ապա ես էլ «Բուկո» կդառնայի:

Չորս տարի շարունակ ես մեր ընտանիքի միակ երեխան էի, և այդ ընթացքում աղջկա պես կիսաշրջագգեստներ էի կրում: Շատ էի փափագում, սակայն, տաբատ հագնել և մշտապես մխիթարվում էի այն «ավելի ուշ ունենալու» մտքով: Հետո, երբ ծնվեց կրտսեր եղբայրս՝ Նիսիմը, այդ առիթով արդեն իրավունք ստացա հագնելու առաջին անդրավարտիքը, և դրա բերկրանքն ու հպարտությունն էլ մեծապես նպաստեցին հետագայում արտասովոր ճշգրտությամբ հիշելու Նիսիմի ծննդյան կապակցությամբ ընտանիքում ծայր առած իրարանցման յուրաքանչյուր մանրուք:

Մի անգամ մեր տանն էին հավաքվել շատ մարդիկ, և ամենուր տեսնում էի վախեցած հայացքներ: Իրավունք չունեի գնալ մորս մոտ՝ ննջարան, որտեղ էլ մանկական մահճակալս էր, և դռան առջև մնացել էի այդպես կանգնած՝ ինչ-որ մեկի ներս մտնելու պահին փորձելով որսալ մորս գեթ մի հայացքը: Բայց դուռն այնքան արագ էր փակվում, որ նրան ոչ մի կերպ չէի կարողանում տեսնել: Լսում էի ինձ անձանոթ ու տառապագին մի ձայն, և երբ հարցնում էի՝ ով է, պատասխանի փոխարեն լսում էի հեռու քաշվելու պահանջը: Մեծերին ես երբեք այդպես վախեցած չէի տեսել, և ոչ ոք չէր հետաքրքրվում ինձնով, ինչը շատ անսովոր էր (ինչպես իմացա ավելի ուշ, մայրս գտնվել է ծանր ու կյանքի համար վտանգավոր երկունքի մեջ): Այդտեղ էր դոկտոր Մենախեմոֆը՝ երկար, սև մորուքով բժիշկը, ով ընդհանրապես շատ սիրալիր էր և հաճախ էր խնդրում, որ երգեմ, ինչի համար էլ ինձ

ԾՆՈՒՆԴԸ

Գ. (Թ) Գործի, քիչ 2 (34) ամբի-հունիս, 2011

ՎԵՐ համահայկական համոզե

միշտ գովում էր, բայց այս անգամ նա չնայեց իմ կողմը ու ոչ մի բառ չասաց. զայրացած նայում էր ինձ, երբ դռան մոտից չէի հեռանում: Դճոցն ավելի էր բարձրանում, ես շարունակ լսում էի՝ «Madre mia querida! Madre mia querida»: Ես գլուխս սեղմեցի դռանը, ու երբ այն բացվեց, տնքոցն ավելի սաստկացավ, և ինձ պատեց սարսափը: Հանկարծակի հասկացա, որ դրանք մորս աղաղակներն էին, և տպավորությունն այնքան ահավոր էր, որ այլևս չէի ուզում նրան տեսնել:

Վերջապես ննջարան մտնելու իրավունք ստացա. բոլորը ժպտում էին, հայրս ծիծաղում էր, և ինձ ցույց տվեցին նորածին եղբորս: Մայրս անհանգիստ, գունատ ու անշարժ պառկած էր անկողնում: Դուկտոր Մենախեմոֆն ասաց. «Նա հանգստի կարիք ունի»: Օտար կանայք շարունակ պտտվում էին սենյակում, միայն թե այժմ բոլորն ինձնով էին հետաքրքրվում. ես աշխուժացա, և Արդիթի տատիկը, ով հազվադեպ էր մեր տուն գալիս, ասաց. «Նա իրեն ավելի լավ է զգում»: Մայրս չէր խոսում: Ես վախենում էի նրանից և դուրս վազեցի ու այլևս չմնացի դռան մոտ: Դրանից հետո՝ դեռ երկար ժամանակ, մայրս ինձ օտարացած մնաց, և պիտի անցնեին ամիսներ, մինչև ես կրկին վստահությամբ լցվեի նրա նկատմամբ:

Աչքիս առջևով անցնող հաջորդ դեպքը թլպատման արարողությունն էր: Շատ մարդիկ եկան մեր տուն: Ինձ թույլատրված էր ներկա լինելու դրան: Ունեի այն տպավորությունը, թե տնեցիներն ինձ դիտավորյալ իրենց հետ տարան. բոլոր դռները բաց էին, տան դուռը ևս, հյուրասենյակի մեջտեղում հյուրերի համար մեծ սեղան էր զգված, իսկ ննջասենյակի դիմացի սենյակում տեղի էր ունենում թլպատումը: Այնտեղ միայն տղամարդիկ էին, և բոլորն էլ՝ կանգնած: Փոքրիկ եղբորս պահեցին մի ամանի վրա, ես տեսա դանակը և հատկապես՝ պնակի մեջ լցվող առատ արյունը:

Եղբորս տվեցին Նիսիմ անունը՝ ի պատիվ մորսպապիս: Եվ ինձ բացատրեցին, որ ես ավագն եմ, և այդ իսկ պատճառով կրում եմ հորական պապիս անունը: Ընտանիքում ավագ որդու դիրքն այնքան էր նշանավորված, որ եղբորս թլպատման պահից հետո սկսեցի գիտակցել գերազանցությունս և այդ հպարտությունից այլևս չձերբազատվեցի:

Սեղանի շուրջն աշխուժություն էր տիրում. արդեն տաբատ հագած՝ գնացի զբոսնելու: Ես դադար չունեի մինչ այն պահը, երբ յուրաքանչյուր հյուր չէր տեսնում տաբատս, և երբ նորերն էին գալիս, անմիջապես վազում էի նրանց մոտ՝ դեպի դուռը՝ դարձյալ նկատվելու հույսով լի: Իսկական իրարանցում էր. բոլորն այդտեղ էին՝ բացի զարմիկ Ժակից: «Նա հեծանիվ է քշում», - նկատեց մեկը, և նրա այդ արարքը ոչ մեկին դուր չեկավ: Նա ներկայացավ ճաշից հետո՝ ամբողջովին փոշեթաթախ: Ես նկատեցի նրա՝ հեծանիվից թռչել-իջնելը. նա ութ տարով մեծ էր ինձնից և գիմնագիստի հանդերձանքով էր: Ժակն ինձ հայտնեց իր նոր հրապուրանքի մասին. նա հեծանիվը վերջերս էր նվեր ստացել: Հետո փորձեց հյուրերի միջով աննկատ սողոսկել տուն, բայց հենց այդ պահին ես ներս ընկա՝ ասելով, որ ես էլ եմ ուզում հեծանիվ ունենալ: Ժակի մայրը՝ Սոֆի հորաքույրս, վրա պրծավ նրա վրա ու այլևս հանգիստ չթողեց: Չարմիկս էլ ինձ վրա մատ թափ տալով անհետացավ:

Այդ օրը ես գիտակցեցի, որ պետք է ծամել միայն փակ բերանով: Ռեզինեն՝ հեծանիվի տիրոջ քույրը, բերանն ընկույզ էր խցկել. ես, տեղումս քարացած, ակնապիշ հետևում էի, թե ինչպես էր փակ բերանով ծամում: Ընկույզի ըմբռնումը երկար տևեց, և երբ նա արդեն ավարտել էր, բացատրեց, որ ես էլ պիտի այդ-

պես անեն, այլապես ինձ կրկին կիսաշրջագգեստ կհագցնեն: Բնականաբար արագորեն սովորեցի փակ բերանով ծամելը, քանի որ աշխարհում ոչ մի գնով այլևս չէի ուզում հրաժարվել տաբատից:

ԹՈՒՐՔԻ ՏՈՒՆԸ: ԵՐԿՈՒ ՊԱՊԵՐՍ

Երբ Կանետի պապս խանութում էր լինում, երբեմն ինձ տանում էին նրա տուն՝ հարգանքի տուրք մատուցելու տատիս: Վերջինս, թուրքական օթոցին ընկողմանած, ծխում էր ու վայելում իր սև սուրճը: Նա միշտ տանն էր լինում. երբեք դուրս չէր գնում. ես նրան երբևէ դրսում չեմ հիշում: Նրա անունը Լատուրա էր: Պապիս պես նա ևս Ադրիանուպոլսից էր: Պապս նրան «Օրո» էր անվանում, ինչը, ի միջի այլոց, նշանակում էր ոսկի. թե ինչու այդպես՝ չգիտեմ: Ազգականներիցս ամենաթուրքակերպը նա էր: Երբեք իր բազմոցից վեր չէր ելնում, չգիտեմ էլ՝ ինչպես էր այնտեղ հասնում, քանի որ նրան չեմ տեսել քայլելիս. ժամանակ առ ժամանակ թառանչում էր ու ծխում: Ինձ ընդունում ու բաց էր թողնում առանց որևէ բան ասելու, բողոքելով: Հետս եկած ուղեկցորդին էլ տրտունջախառն մի քանի նախադասություններ էր ասում: Գուցե նա իրեն հիվա՞նդ էր համարում, չգիտեմ, բայց հաստատ տառապում էր արևելյան ծուլությամբ և չափազանց աշխույժ պապիս հետ նա, անշուշտ, պիտի տառապեր:

Ուր որ լինում էր պապս, միշտ հայտնվում էր ուշադրության կենտրոնում. ես այն ժամանակ չգիտեի, որ տանը նրանից վախենում էին, ինչպես մի բռնակալի, ով կարող էր նաև աղիողորմ լացել, երբ իրեն լավ էր զգում, բայց նրա համար ամենից հաճելին իր թռնորդիների ընկերակցությունն էր: Ընկերների ու ծանոթների միջավայրում նա համբավավոր էր հրաշալի ձայնով. հատկապես սիրված էր կանանց կողմից: Երբ նրան որևէ տեղ էին հրավիրում, տատիս հետը չէր վերցնում, քանի որ վաղուց ձանձրացել էր նրա հիմարություններից ու անվերջ գանգատներից: Նա անմիջապես շրջապատվում էր մարդկանցով, անում իր պատմությունները, որոնց գլխավոր հերոսը միշտ ինքն էր, իսկ երբ ներկայանում էր երգելու առիթը, սիրում էր, որ իրեն երկար թախանձեն:

Կանետի տատիցս բացի՝ Ռուսչուկում կային թուրքական ուրիշ բաներ ևս: Սովորածս մանկական առաջին երգը՝ «Կարմիր խնձորիկները Ստամբուլից են», ավարտվում էր «Ստամբուլ» բառով. լսել էի, որ այն մեծ քաղաք է, և այդ անունը կապում էի մեզ այցի եկող թուրքերի հետ: Էդիրնե՝ թուրքերն այսպես էին կոչում Ադրիանուպոլիսը, քաղաք, որտեղից էին Կանետի տատս ու պապս: Վերջինս թուրքական երգեր չէր երգում. դա գուցե նրանից էր, որ չէր կարողանում երկար պահել երաժշտական բարձր տոները: Իսկ ինձ ավելի շատ դուր էին գալիս իսպանական հզոր ու արագ ռիթմերով երգերը:

Մեր տնից ոչ հեռու գտնվում էին ունևոր թուրքերի տները. դրանք ճանաչելի էին պատուհանների առջևի նեղ ճաղավանդակներից, որոնք ծառայում էին կանանց հսկելու համար: Առաջին սպանությունը, որի մասին լսեցի, խանդի հողի վրա մի թուրքի կատարած ոճիրն էր: Արդիթի պապի տուն գնալիս մայրս մի անգամ ինձ տարավ մի այդպիսի տան կողքով, ցույց տվեց բարձրության վրա գտնվող վանդակաճաղն ու ասաց, որ այնտեղ՝ վերևում, մի թրքուհի է կանգնած եղել և նայել է այդ պահին փողոցով անցնող բուլղարացու: Դա նկատել է նրա

Գ. (Թ) Կարի, թիվ 2 (34) ամբի-հունիս, 2011

ՎԵՄ համահայկական համոնես

թուրք ամուսինն ու կնոջը սրախողխող արել: Ես չեմ կարծում, թե նախկինում իսկապես հասկանում էի, թե ինչ է մեռած մարդը: Բայց այդ մասին իմացա զբոսանքի ժամանակ՝ մորս ձեռքը բռնած: Ես նրան հարցրի՝ թուրք կինը, որին գտել էիմ արյան լճակում, արդյոք նորից վեր էր կացել: «Երբեք,- ասաց նա,- երբեք. նա մեռած էր, հասկանու՞մ ես»: Ես լսեցի, բայց չհասկացա և կրկին հարցրի: Այդպես ես նրան ստիպեցի իր պատասխանը մի քանի անգամ կրկնել, մինչև որ դժգոհեց ու խոսեց ուրիշ բաների մասին: Բայց միայն արյան լճակում մեռածը չէր, որ ինձ վրա տպավորություն էր թողել, այլ նաև տղամարդու խանդը, որը նրան դրդել էր սպանության: Խանդի զգացումը կարծես դուրս եկավ, և ինչքան էլ ինձանից վաճում էի թրքուհու սպանության պատմությունը, խանդը, միևնույն է, նորից սողուկում էր մեջս:

Ես դա զգացի զբոսանքի վերջում, երբ հայտնվեցինք Արդիթի պապի մոտ: Շաբաթը մեկ՝ ամեն շաբաթ օր, մենք այցելում էինք նրան: Պապս ապրում էր կարմրավուն, ընդարձակ տան մեջ: Տան ձախակողմյան փոքր դռնակից առջևը բացվում էր հին այգին, որն ավելի գեղեցիկ էր, քան մերը: Այնտեղ կար գետնամած ճյուղերով մի մեծ թթենի, որի վրա կարելի էր հեշտությամբ մազկցել: Ես դեռ իրավունք չունեի դա անելու, բայց մայրս երբեք անտարբեր չէր անցնում թթենու մոտով՝ առանց ցույց տալու վերևի հաստ ճյուղերից մեկը. դա մի ժամանակ եղել էր նրա թաքստոցը, որտեղ դեռատի աղջիկը սովորաբար նստել էր, երբ ցանկացել էր մեկուսանալ: Այնտեղ էր սողոսկել իր գրքով, լռելյայն նստել ու իրեն այնքան խելամտորեն պահել, որ նրան ներքևից շտենեն, հաճախ չէր էլ լսել, երբ իրեն կանչել էին, քանի որ գիրքը շատ էր նրան դուր եկել. այնտեղ՝ վերևում, նա կարդացել է իր բոլոր գրքերը: Թթենուց ոչ հեռու աստիճանները տանում էին դեպի տուն, սենյակները մերինից ավելի բարձր էին, բայց միջանցքները մթամած էին: Բազմաթիվ սենյակների միջով հասնում էինք վերջինին, որտեղ պապս նստած էր թիկնաթոռի մեջ. նա փոքրամարմին, գունատ ու հիվանդոտ մի տղամարդ էր՝ միշտ փաթաթված շալերով ու տաք ծածկոցով:

Մայրս ասում էր. “Li beso las manos, Señor Padre!” - «Համբուրում եմ Ձեր ձեռքը, պարո՛ն հայր»: Հետո նա ինձ առաջ էր հրում. ես նր ան չէի սիրում և պետք է նրա ձեռքը համբուրելի: Նա երբեք ուրախ չէր կամ զայրացած կամ քնքուշ կամ խիստ, ինչպես մյուս պապս էր, որի անունն էի կրում. նա միշտ նույնն էր. նստած էր իր թիկնաթոռին և չէր շարժվում. չէր խոսում ինձ հետ, ոչինչ չէր նվիրում, միայն մորս հետ մի քանի բառ էր փոխանակում: Այնուհետև ավարտվում էր այցելությունը, ինչը ես ատում էի. ամեն անգամ նույն բանը: Նա նայում էր ինձ խորամանկ ժպիտով և ցածրաձայն հարցնում. «Դու ու՞մ ես ավելի շատ սիրում՝ Արդիթի պապի՞ն, թե՞ Կանետի պապին»: Նա գիտեր պատասխանը. բոլոր մարդիկ՝ մեծ թե փոքր, Կանետի պապի կողմն էին, իսկ իրեն ոչ ոք չէր սիրում: Բայց նա ուզում էր ինձ ստիպել, որ ես ճշմարտությունն ասեմ և ընկնեմ տհաճ վիճակի մեջ: Դրանից նա հաճույք էր զգում, ինչը կրկնվում էր ամեն շաբաթ օր: Ես սկզբում ոչինչ չէի ասում, անօգնական նայում էի նրան. նա կրկնում էր իր հարցը, մինչև ես ստելու համար ուժ էի գտնում և ասում՝ երկուսին էլ: Այդ պահին նա սպառնալով մատը բարձացնում էր և բղավում՝ կեղծավո՛ր. ընդ որում, նա երկարացնում էր «ո»-ն, և բառը հնչում էր սպառնազին ու միաժամանակ բողոքավոր. այն դեռ իմ ականջներում է, կարծես երեկ էի նրան այցելել:

Բազմաթիվ սենյակների և միջանցքների միջով անցնելիս ես ինձ մեղավոր ու

ճնշված էի զգում, քանի որ ստել էի: Թեև մայրս շատ նվիրված էր իր ընտանիքին ու ավանդույթի ուժով շարունակում էր այցելել հորը, այնուամենայնիվ իրեն մասամբ մեղավոր էր զգում, քանի որ մյուս պապիս հասցեագրված մեղադրանքը հանիրավի ինձ էր բաժին ընկնում: Որպես միսիթարանք՝ նա ինձ տանում էր «բախչե»՝ տան հետևի մրգատու ծառերով ու վարդերով լի պարտեզը: Այդտեղ նա ինձ ցույց էր տալիս օրիորդական տարիներից ի վեր իր սիրած բոլոր ծաղիկները, լայնացրած ու դողացող ռունգերով վայելում դրանց բուրմունքը, ապա ինձ էլ բարձրացնում էր, որպեսզի ես էլ հոտոտեմ վարդերը. եթե հասած ինչ-որ մի բան էր տեսնում, ապա, քանի որ Սաբաթ էր, պապիցս թաքուն քաղում էր ինձ համար: Դա իմ երբևէ տեսած ամենահիասքանչ, սակայն անխնամ այգին էր: Եվ քանի որ պապս ոչինչ չպիտի իմանար քաղված Սաբաթ-մրգի ու մորս՝ հանուն ինձ կատարած անթույլատրելի արարքի մասին, մայրս դրանով վրայիցս հանում էր իմ մեղքի զգացումը, և տունդարձի ճանապարհին, արդեն լիովին առույգացած, նորից դառնում էի հարցասեր:

Իսկ տանը Լատրիկա զարմուռուց տեղեկանում էի, որ պապս խանդել է՝ ասելով, թե իր բոլոր թռռներն իրենց մյուս պապերին ավելի են սիրում, և ինձ վստահում էր մեծ գաղտնիքը. մորապապս ժլատ է, բայց ես իրավունք չունեմ դա ասելու մորս:

Գերմաներենից թարգմանեց՝ Լիանա Ա. Սաֆարյանը

Summary

THE SAD ARMENIAN

Passages from Elias Canetti’s Autobiographical Trilogy.

Albert A. Makaryan
Liana A. Safaryan

The given article touches upon the autobiographical trilogy (“The Tongue Set Free“, “The Touch in My Ear“, “The Play of the Eyes“, 1977-1985) by the well-known 20th century Austrian writer Elias Canetti(1905-1994) who has won the Nobel Prize. Here we have especially picked out the episodes from the first part of the trilogy in which the author through the eyes of a child presents the tragedy of the small and oppressed nations among which is the story of a man who has undergone the horrors of the Genocide.

In the end of the article in a form of an appendix we present some Armenian translations of the typical parts.